



# ՄԵԾ ՊԱՅՔ

2021

## Ի՞նչ է Պահքը:

Ազգ շաբթուան նախորդող օրերու յաջորդականութիւնը կը կոչուի պահք: Ինքնազտումի և ինքնարժեքն ունենալու պահ է: Եկեղեցին կ'առաջնորդէ Հաւատացեալ անհատը, որ այս շրջանին ինքզինք Հոգեկան և Ֆիզիքական մաքրութեան ենթարկէ:

Պահքը կը սկսի Երկուշաբթի, Բուն Բարեկենդանի յաջորդող օրը և կը շարունակուի մինչեւ Ծաղկազարդ նախորդող Հաբաթ օրը: Այս տարի պահքի օրերն են Փետրուար 15-էն մինչեւ Մարտ 26, այլ խօսքով 40 օր:

## Ուտելիքներու սահմանափակում:

Պահքի կարեւորագոյն օրէնքներէն մէկն է որոշ ուտելիքներէ Հրաժարիլ: Ըստ Հայոց եկեղեցւոյ օրէնքին պէտք է Հրաժարիլ կենդանական ուտելիքներէ, օրինակ՝ մեղէն, կաթ, պանրեղէն, Հակիթ, Հակեղէն, ձկնեղէն և ամէն ինչ որ կենդանիէ կու գայ: Մտնողի Հետ կապուած այս օրէնքները փոփոխութեան չեն ենթարկուիր ո՛չ շաբաթավերջերուն, ո՛չ ալ երեկոյներուն:

Ուտելիքներու վերաբերեալ այս կանոնները պահքի օրէնքներէն բաժին մըն են: Բայց Քրիստոս մեզ կը զգուշացնէ. «Ի՞նչ որ բերնէն կը մտնէ՝ ան չէ որ կը պղծէ մարդը, այլ ինչ որ բերնէն կ'ելլէ ա՛ն է որ կը պղծէ...» (Մատթեոս 15:11)

Քրիստոնէական այս սովորութիւնը Հաւատացեալ անհատին առիթ կու տայ, որ Հաշուի նստի իր անձին Հետ և փորձէ ինքնաճանաչմամբ քննութեան ենթարկել ինքզինք:

Հիմնականին մէջ, պահքը այն ժամանակն է երբ անհատը կը մտածէ, թէ ի՞նչն է ապրելու և գոյատեւելու կարեւորագոյն պատճառը: Վստահաբար Սէ՛րը պիտի ըլլայ քու կեդրոնացումը պահքի օրերուն, որովհետեւ միակ սիրով է որ կեանքը իմաստ կը գաննէ:

## Պատարաս

Նոյնիսկ եկեղեցին իր արտաքին տեսքը կը փոխէ պահքի օրերուն: Խորանին վարագոյրը փակուած կ'ըլլայ, որպէսզի յիշեցնէ մեզ, որ մեղքն է միակ պատճառը որ մեզ Հեռու կը պահէ Աստուծմէ: Հաբթուան ընթացքին ունինք աղօթքի յատուկ արարողութիւններ, ինչպէս Հսկում (խաղաղական և Հանգստեան) Մ. Ներսէս Հարազար «Հաւատով Խոստովանիմ» աղօթքով և արևազալի ժամերգութիւնները:

~ Վազգէն քնյ. Մովսէսեան

## Պահոց Կիրակիները

Իւրաքանչիւր Կիրակի անուն մը ունի, որ իր մէջ կը խտացնէ Մեծ Պահքին նպատակին Հետ կապուած մասնայատուկ իմաստ մը:

- **Փետր. 14 - Բուն Բարեկենդան -** Վայելքի և Երջանկութեան օրն է. Աստուած մեզ պարգեւեց կեանք, որ Հաճոյքով ապրինք ու վայելենք իր բարիքներն ու օրհնութիւնը:
- **Փետր. 21 - Արտաքանին Կիրակի -** այն օրն է որ մեզ կը յիշեցնէ, թէ ինչպէս մեղքը մուտք կը գործէ մեր կեանքէն ներս և մեզ կ'արգիլէ վայելելու. Աստուծոյ գերազոյն Հարազար:
- **Փետր. 28 - Աստուծոյ Կիրակի -** անառակ որդիին պատմութեան կը վերաբերի, որու պատգամն է, թէ ինչքան ալ Հեռանանք մեր ուրախ և սերով շրջապատուած կեանքէն, միշտ այն յոյսը ունինք, որ կրնանք ետ դարձ մը ընել դէպի մեր Հարազատ տունը, այսինքն՝ Աստուծոյ ներումը ստանալ: Աւելին՝ մեզ կը սորվեցնէ Աստուծոյ, մեր Հանդէպ, անսահման սիրոյ մասին:
- **Մարտ 7 - Տառեկի Կիրակի -** Աստուած մեզ պարգեւած է պատասխանատուութիւններով լեցուն կեանք մը: Ինչպէս պէտք է դասաւորենք մեր կեանքն ու ընտանիքին խաղաղութիւնը:
- **Մարտ 14 - Գառնուրի Կիրակի -** Յարաստեութիւն և մնայուն Հաղորդակցութեան մէջ ըլլալու կարիքը. Աստուծոյ Հետ կը յայտնուի այս անհրաւ և անարդար դատաւորի ընդմէջէն:
- **Մարտ 21 - Գարսեան Կիրակի -** Քրիստոս կը վերադառնայ Երկիր վերջին դատաստանը կատարելու: Ինչպէս կարելի է պատրաստ ըլլալ այս օրուան Համար: Իբրեւ Հայ քրիստոնէայ, որոնք են մեր պարաստաւորութիւնները մեր ընտանիքին, Հայրենիքին և մարդկութեան Հանդէպ:
- **Մարտ 28 - Ծաղկազարդ -** Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ: